

891.99  
C - 51



-6 NOV 2011

391-99

ՀՀ-51

ԳՐԻԳՈՐ ՏԱԼԵՆ

Այս

# ԱՆՁՈՒՐ ՊԱՐՏԵԶ

Վարդ Տանեցի,  
Դարմ Քանեցի,  
Եղիշ Մինարեցի,



Տպարան ՀՀ Կ. Ա. Կ. Ալեքսանդրապոլ

1913

ՏԵՍ 02/2013 2013

17570



## ՍԻՐՈՒՆԻՆ



608  
49.

էղ ոսկեթել մազերդ,  
Անուշ լեզուղ, նազերդ,  
Խելքս գլխէս իղեցին—  
Հուր ու կայծակ աչերդ:  
  
ՀԵյ վախ թռնում ես թռչնի պէս,  
մէկ ետ չես նայում,  
Հեռանում հողիս ես հանում,  
Մոռանում հէզ սիրտս տանում,  
Ել ես ինչ անեմ, դարտս ուր տանեմ,  
և ճարս կտրեցիր:\*)

Ուր որ երթաս հեռանաս,  
Դու մեծ փառքի տիրանաս,

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

Քեզ հետ բարի հրեշտակ,  
Միայն ինձ չը մոռանաս...

Ծաղկունք բացուին ոտքիդ տակ,  
Գլխիդ փայլէ արեգակ,  
Իմ աննման նազելի,  
Ինձ մի թողուր միայնակ...

Մ Ե Ծ Մ Ա Ռ Դ

Դու ամբոխային ծովացած դարտով,  
Տամնեակ տարիներ տանջանք կրեցիր,  
Եւ քեզ մոռացած անարատ սրտով,  
Բիւր ցաւեր գրկած կոիւ մղեցիր:

Քո հերոսական կուրծքդ դէմ դրած,  
Անձնատուր եղած վսեմ գործերի,  
Մէզ արծւի նման թևերդ փռած,  
Գեղ էիր դնում արնոտ խոցերի:

Բայց մի դաժան ձեռք գետին գլորեց,  
Դու մուրազաչոր-ընդ միշտ լռեցիր,  
Արնոտ գնդակը սրտիդ մէջ սառեց,  
Բիւրաւոր աչքեր լալով թողեցիր:

Դ Ա Ռ Դ Ա Ժ Ա Ռ

Էս ի՞նչ դիվան-դատաստան է,  
Մարդու դարտաժար են անում,  
Աշխարք զալումի մէյտան է,  
Խեղճին դարբէդար են անում:

Մալ ու մուկը զալումինն է,  
Բաղ ու բախչէն հիւրիներով,  
Շէն տները զալումինն է,  
Թաւշեայ մարմին փէրիներով:

Սէֆիլ մարդը թիքէմ հացին,  
Օրըն հազար ախ է քաշում,  
Դեղ էլ չկայ սրտի խոցին,  
Էլի դեռ ապրել է ուզում:

ՎԱԹԱՆԵՆ ԽՍՊՐԻԿ ԶԿԱՅ

Գարուն էկաւ հովեր բերեց սարերէն,  
Թառլան դշեր ձէն տուին խոր ձորերէն,  
Նախշուն ծաղկունք բացւան անուշ  
Բուլբուլ կերպէ նազլի վարդի կարօտով,

Ալմաստի պէս անձրև կուգայ ցօղալէն,  
Մատադ ծլեր գետնէն կենին լողալէն,  
Կոռնկները էկան անցան-հեռացան,  
Երամ-երամ ու երգելով քաղցրաձայն,

Մեր վաթանէն մեղ մի խաբար չբերին,  
Հազար էրնէկ անցած անուշ օրերին,  
Ի՞նչ օրերից՝ ինչպէս օրի մնացինք,  
Մեր սրտերը ախուվախով մաշեցինք:



ԷՆ ՈՐ ԿՈՒՇՏ ԵՍ

Ի՞նչ ես նստել խելքդ չափում,  
Շողին ինչեր ես մտածում,  
Թէ որ կուզես ապրել խելքով,  
Պիտի ապրես միշտ ապահով:

Էն որ կուշտ ես ամեն բանից,  
Արխէին ես տեղից-տանից,  
Թէկուզ դժոխք, թէկուզ դրախտ,  
Քեզի կտան ոսկեցէ թախտ:

Ամառն ապրի հով դրախտում,  
Փէրիներ են այնտեղ վիստում,  
Իսկ ձմեռը՝ դժոխքում տաք,  
Ել ի՞նչ կանես հաստ ու բարակ:

Էս խօսքերս դու մի մոռնայ,  
Իզուր խելքիդ բեռ մի բառնայ,  
Քանի լիքն է էդ գրպանըդ,  
Միշտ քէֆ քաշէ. այ քու բանըդ:

Ն Ա Ւ Ե Բ Ք Ա Զ Ի Ն

Մի՛ լար, մայրս, դու մի՛ սըդար,  
Թնդ էն մայրեր լան-սըդան,  
Որոնց որդիք զոհ են դարձել,  
Լուռ ու մունջ ստրկութեան:

Թէև ընկայ ես միայնակ,  
Հազար թշւառ փրկեցի,  
Էն բիւրաւոր լացողների-  
Արտասունքը սրբեցի:

Գաղափարի փայլուն աստղեր,  
Շողշողում են իմ գլխիս,  
Ազատութեան հըեշտակներ,  
Պիտի գրկեն վեհ հոգիս:

Թէև հեռու հայրենիքէս,  
Անուշ կեանքս զոհեցի,  
Իմ արիւնով ու վէրքերով-  
Անմահութիւն գրկեցի:

\* \* \*

Ծառ եմ տնկել՝ քար կուզեմ,  
Մատիս անզին քար կուզեմ,  
Ես ջահէլ եմ էշխ ունիմ,  
Ջահէլ-ջիւան եար կուզեմ:

Գեղի մէջ տուն շինեցի,  
Ալ ու կանանչ ներկեցի,  
Չորս բոլորը ծաղիկներ...  
Մարմառ պարիսպ քաշեցի:

Եռուն տարիս լրացաւ,  
Եարս թուաւ-հեռացաւ,  
Շատ տարի է չեմ տեսել,  
Աճապ ինձի մուացաւ:



Գ Ի Ւ Մ Ռ Ի Ք Ա Ղ Ա Ք

Խեղճ-տիրազուրկ Գիւմրի քաղաք,  
Քայքայվում ես արագ-արագ,  
Եդ քո շքեղ դահլիճներըդ,  
Վախեմ դառնան յէրդի մարագ:

Հարուստներդ մէկիկ-մէկիկ,  
Սլանում են զերթ ծիծեռնիկ,  
Խեղճ աղքատը անձար մնաց,  
Ցեխերի մէջ ոտարոբիկ:

Ունիս տաղանդաւոր որդիք,  
Լինելու են մեծ-մեծ մարդիք,  
Ափսոս տէր ու պաշտպան չկայ,  
Գլուխներին հազար չարիք:

Վարպետներդ մերկ են, քաղցած,  
Խոշոր-խոշոր ցաւեր զրկած,  
Գիշեր ցերեկ միշտ անհամնզիստ,  
Դատին-դատին, մի կտոր հաց:

Թէ միշտ չարխըդ այսպէս դառնայ,  
Քեզ ամեն մարդ պիտի մոռնայ,  
Դու կը մնաս աւեր-անտէր,  
Շուտ բուերի բուն կդառնայ:

Ա Ն Զ Ի Կ Ե Ա Ր Ե Ա Ր

Զմեռն եկաւ՝ ձուն չի դայ,  
Ճամբէն կաշեմ տուն չի դայ,  
Մարդու դարտաժար կանէ,  
Մենակ աչքս քուն չի դայ:

Անջիկեար-անջիկեար-անջիկեար.  
Արի մենակ եմ, եար քեզ կսպասեմ,  
Զէղնի քու դարտով մեռնեմ:

Գիշերն անուշ է-հով է,  
Իմ սիրաս արլնծով է,  
Աշընզիշեր է նախշուն,  
Դարտոս մարդուն համով է...

(\* Ամեն տան վերջ կրկնել այս տողերը.)

Մշուշն իջաւ սարերուն,  
Շուաքն ընկաւ ձորերուն,  
Էրնէկ կուտամ ամեն օր,  
Անցած անդին օրերուն:

Ա Ն Բ Ա Դ Ի Ե Մ

Բաղը մտայ բատամ պոկեմ,  
Բարի մէրըս բարկացաւ,  
Ծառը ելայ ծիրան պոկեմ,  
Ծիտը վրէս զայրացաւ:

Թոչուն դառնամ թեթև թռնիմ,  
Էրթամ կորիմ էս երկրէն,  
Մօրս ու մամիս մենակ թռղնիմ,  
Էս աշխարհի ծով դարտէն:

Սիրուն սարի սուր կատարին,  
Ծաղկանց ծոցում ծածկուիմ,  
Շիրիմ շնեմ շուարներին,  
Էս աշխարքէն ազատուիմ:

Էս աշխարքի դարար գովեմ,  
Իմ երգերով-իմ սազով,  
Էն զուգուովի դարդը գովեմ,  
Զօր ու գիշեր հաւասով:

Ս Ի Ռ Ո Ւ Ն Վ Ա Ր Դ Ի Ն

Վարդ մի բացուիր, օրդ անցաւ,  
Զիւն կը նոսի թերթիկներիդ,  
Ու բուլբուլդ էշից ընկաւ,  
Էլ չի երգում դեղ դարտերիդ:

Գարնան անուշ ցօղը չկայ,  
Որ շաղ գնէ ծարաւ սրտիդ,  
Լոյս արևի շողը չկայ,  
Զերմէ-բուժէ դարտոտ հոգիդ:


Այնքան երգեց-այնքան գովեց,  
Մինչ իր գարնան վերջ, բլբուլդ,  
Բայց բէմուրազ դադրաւ-լոեց,  
Էն բալալի խեղճ բլբուլդ:

ԽԱԲՈՒԽՄԻԿ ԱՇԽԱՐՀՅՀ

Այս աշխարհը մերկ եմ եկել,  
 Դարձեալ կերթամ մերկ մարմնով,  
 Լացով-ցաւով լոյս եմ ընկել,  
 Ու ապրել եմ միշտ դարտով։

Ինչու բերիր դու ինձ աշխարհ,  
 Գթոտ ծնող-վշտոտ մայր,  
 Ինչու-ինչու, և ում համար,  
 Դու էլ ոչինչ չհասկացար։

Այսպիսի մարդ գեռ չեմ տեսած,  
 Որ զոհ լինէր վիճակէն,  
 Ու բաղձանքին ճշտիւ հասած,  
 Բաժանուէր այս աշխարքէն։



Ե Ր Ք Զ Ի Ն

Կարմիր վարդդ թառամեցաւ-խոնացաւ,  
 Ջահէլ կեանքդ էշից ընկաւ դառնացաւ,  
 Իզուը ես նոր կեանք սպասում.  
 Ոսկի ժամերդդ երազում։\*

Ընկերներդ քեզ մոռացան, մատնեցին,  
 Քո բարութեան դէմ քեզ թակարդ լա-  
 րեցին...

Յօրինեցիր միշտ գողացրիկ դեղ երգեր,  
 Այն երգերով բուժեցիր խոր-խոր վէր-  
 քեր..

Իսկ քո վէրըիդ տեղ ու դարման չը  
 գտար,  
 Երկար տարիք զուր ջանացիր չարաչար..

\*) Ամեն երկու տողից յետոյ՝ կըկնել այս  
 տողերը։

Բայց ոչ, մոռցիր հին վշտերդ դառ-  
նաղին,  
Դարձեալ կուգայ դարուն քեզ տալ  
վարդ կըկին. .

Նորից լոյս արև կը ծագէ,  
Դառնութեան դոներ կը փակէ:

S T E S L

Հազար արատ կան իմ վրէս,  
Անարատին ծաղը եմ անում,  
Որքան տեսնիմ սիրուն երես,  
Ինձանից տգեղ եմ կարծում:

Միտքս կոյր է, աչքելս բաց,  
Զարն ու բարին չեմ նկատում,  
Ուրտեղ տեսնիմ մի զարգացած,  
Ինձանից տգէտ եմ կարծում,



ՆԱՄԱՐՏ ԱՂՋԻԿ

Մատը անդին մատանի,  
Նստել քարկան կբանի,  
Ամեն մի վեր աշելիս,  
Մարդու խելքը կտանի:  
Աչքերով, այսերով, ունքերով մա-  
լում աղջիկ,  
Խանձեցիր, խորվեցիր քո սիրով  
գալում աղջիկ\*:

608  
94

Ելեր կերթայ մեծ կալը,  
Բօխախին ջուխտակ խալը,  
Որ էդ մարալն իմս էդնի,  
Ինչ է աշխարքի մալը:

Ամպը ելաւ՝ հով կանէ,  
Անձրև կուգայ՝ ծով կանէ,  
Ա՛լս էդ նամարտ աղջիկը,  
Ամենքին աչքով կանէ:

\* ) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:



Արեն ընկաւ արտերուն,  
Բլբուն իջաւ վարդերուն,  
Էդ անուշիկ երգերըգ,  
Վերջ տուին իմ դարտերուն:

Ե Ր Ա Ն Ի Թ Է

Երանի թէ քեզ սիրուն աչքս չտեսնէր  
երբէք,  
Հէզ սրախս անձէն-անխօս լարեր չէր  
մայ բեկրեկ:

Հէյ, քեզի տեսայ պարտէզ մտնելով,  
Կաքաւի նման նազով, ման գալով,  
Հոգիս հանեցիր, թռար, թռար հեռա-  
ցար:<sup>\*</sup>

Ով որ էդ լոյս երեսդ միայն մի ան-  
գամ տեսնի,  
Էդ անուշիկ վայրկեանին էլ ոչ մի բան  
չի հասնի:

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը.

Դու անթառամ ծաղիկ ես դրախտի բա-  
ղում բուսած,  
Կամ անմահական խնձոր՝ ծառին կար-  
մըրած-հասած:

Հրեշտակի նման ես, միայն թևերդ են  
պակաս,  
Սիրուն սիրամարդի պէս երկրի վրայ  
ման կուգաս:

Պ Ա Ր Ե Ր Գ

Թէ առնէի-զուշ էղնէի թռնէի,  
Վեր սլացող էն թռչնիկը բռնէի:

Զանը մետաքսէ-խաս է,  
Սիրուն է-ոսկէ թառ է,  
Ով որ նրան տեսնի մի անգամ,  
Հասնի մի անգամ էլ իր կեանքում,  
Դարդ ու ցաւը չի մօտենայ, հէյ,  
Սնփուշ վարդ է, անդին դարդ է:<sup>\*</sup>

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը.

Սիրտս սրտին, հոգիս հոգուն խառնէի,  
Էս աշխարքէն իմ մուրազս առնէի:

Առամերէն ալմաստ-գոհար կցօլա,  
Շըթունքները անդին եաղութ ալվալա:

Բարձրացել է ամպերի հետ խաղ կանէ,  
Սև աչքերէն մարդկանց կայծեր շաղ  
կանէ:

### ՎՃՏԱԼԻ ԱՃԽԱՐՀՅ

Սուրամ ալանամ ձեզ օդ ու եթեր,  
Կրծքիս տակ փոսծ թուխ ու մուխ  
ամպեր,  
Շուրջըդ պտուտ գամ, վշտալի աշխարհ.  
Մինչեւ քաղցր հանդիստ գտնեմ ա-  
զատ վայր:

Դառնութեան դաժան ճանկերից պլծած,  
Գոհունակութիւն տամ բագկատարած,

Ու հէզ գլուխս գնեմ ժեռ քարին,  
Այսպէս էլ հանդչի իմ յոգնած հոգին:

### Ք Ե Ա Ֆ Ի Ռ Ե Մ

Ոչ մի էակ չի կարենայ ինձ գերել,  
Թէկուզ լինի յաւերժահարս աննման,  
Կամ հրեշտակ, կամ դիցուհի, զբաւել  
Մի ձեռք կարծես կաշկանդել է զերու-  
թեան:

Զգացմունքս կարծես թուաւ-չքացաւ,  
Ես քեաֆիր եմ, քեաֆիր սիրտս քա-  
րացաւ,  
Այն մվ էր որ զլխիս իշխան-տէր դարձաւ,  
Եղայթշառ ու մարդկանցից հալածւած:

Մի վեհ անձն էր սիրտս գերեց-գրաւեց,  
Իր վեհութեամբ կարողացաւ ինձ տիրել,  
Ամբիծ սիրով խելքս ու միտքս կաշառեց,  
Էլ ոչ ոքի երբէք կարող չեմ սիրել:

ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԻԿ

Եար, քեզ նման փայլուն աստղիկ,  
Դեռ ոչ մի մայր չի ծնել,  
Ջան, քեզ նման մի խառ ծաղիկ,  
Դեռ մի աշխարհ չի ծլել:

Ինչքան որ մեծ դարտ ունենամ,  
Սրտիս անհուն խորքերում,  
Մէկ քեզ տեսնիմ կը մոռանամ,  
Վարդ կը բացւի իմ սրտում:

Ինչպէս ծաղկանց, ծարաւ ծաղկանց,  
Անձրև ցօղէ ամպերով,  
Դու էլ ցօղն ես միշտ իմ կենաց,  
Շըթունքներով, այտերով:



ԴՐԱԽԱՏԻ ԾԱՂԻԿ

Դու մի ծաղիկ գրախտալին,  
Դեզ ես անբոյժ վէրքերի,  
Դու վառ աստղիկ ես երկնային,  
Քնար տիտուր սրտերի:

Դու գեփիւռ ես Ալատաղէն,  
Եւ մի մեծ յոյս ընկածին,  
Դու աղբիւր ես կենաց բաղէն,  
Ու անշէջ լոյս թմրածին:

Քեզ պիտ նայել ամբիծ հգւով,  
Ու ճանաչել թէ ի՞նչ ես,  
Քեզ պիտ դիտել զօրեղ աչքով,  
Դու միշտ սէր կը ներշնչես,

Դ Ա Ի Շ Ս Թ Ռ Ա Ի

Դուշտ գնաց, թուաւ գնաց,  
Սարէն-ձորէն ձէն կուտայ,

Ալրտա հետը տարաւ գնաց,  
Աճապ էլի տուն կուզմյ:

Հազար ըռանկ փետուրներով—  
Ղանասները ալվալայ,  
Բացեց-փոեց մեծ ծովերով—  
Անցաւ գնաց, այ բալայ:

Խօսիր վանդակ, ոսկէ վանդակ,  
Էդ քու գուռդ ով բացեց,  
Որ ինձ թողեց միս-միայնակ,  
Միրուն զուշ թոցըեց:

Ի Մ Ե Ա Ր Ս

Մի բալա է էս իմ հարս,  
Մի եանդուն է հուր ու բոց,  
Խանձեց-խորվեց, կտրեց ճարս,  
Զիկեարներս շինեց խոց:

Ով կարող է, թող մօտենայ,  
Էս եանդունին-էս բոցին,  
Կտրիմ կուզեմ որ դիմանայ,  
Էսքան դարտին-խոր խոցին:

Դարտեր, վարդեր մէկ եմ հիւսել,  
Զեռքս առած զարդի տեղ,  
Ես ուզում եմ փունջ հոտոտել,  
Դարդ եմ շնչում վարդի տեղ:

Տ Խ Ո Ւ Բ Մ

Ես կորագլուխ, անժպիտ դէմքով,  
Գնում եմ յառաջ, թախիծը սրտիս,  
Ճանապարհ ընկած ու բագլերով,  
Դէպ իմ ցանկալի վեհ նպատակիս:

Անդեղ ու անբոյժ ցաւերի ծոցում,  
Շաւիդ եմ շինել, ձգտում տագնապով,  
Հէյ, շտապում եմ իդէալիս գրկում,  
Գըգուանինջ լինել օդեայ վերմակով:

Թող այնուհետև ամպեր որոտան,  
Կայծակներ շանթեն դարաքաշ զլիխս,  
Իսկ ես կը նընջեմ հանգիստ յաւիտեան,  
Մի անշուք պսակ կրելով կրծքիս:

### ԴԱՒԱԾԱՆԻ ԶՂՋՈՒՄԸ

Պայծառ արեգակ ու պայծառ լուսին,  
Ո՞հ, էլ միք նայիր իմ ու երեսին,  
Ես դաւաճան եմ, մեղայ եմ գոչում,  
Ներիր ինձ Աստւած, խիղճա է խայթում:

Թէս զղջում եմ, բայց ուշ է արդէն,  
Էլ ինձ փրկութիւն չկայ աշխարհէն,  
Այս մեծ արատը թնդի սերնդիս,  
Եղայ դաւաճան խեղճ անտէր աղջիս:

Քանի հերոսներ մահու մատնեցի,  
Քանի անմեղներ գերի շինեցի,  
Օտար ազգերից փառքեր ստացայ,  
Իմ ազգս բնաւիսպառ ուրացայ:

Ահա շէն պալատ, ահա զարդարանք,  
Բայց չեն կարենար լինել ինձ փրկանք,  
Չար արարքներս, երբ միտու եմ բերում,  
Սիրտըս է այլվում, հոգիս է դողում:

Կուրացէք աչքեր, գոնէ չը տեսնիք,  
Էս դաժան սրտիս կատարած չարիք,  
Արիւն արցունքով երկիր ներկեցի,  
Արընծովի մէջ ոսկի դիզեցի:

Ես կարծեցի թէ չկայ ինձ մեռնել,  
Բայց հոգիառը դէմս է կանգնել,  
Պայծառ արեգակ ու պայծառ լուսին,  
Ո՞հ, էլ միք նայիր իմ ու երեսին:

\* \* \*

Սարի սրտին սէլրան էրթանք,  
Դու գեղ քաղէ դարդիս դիր,  
Մանուշակներ մառմառ մարմնիդ,  
Վարդեր վերու վէրքիս դիր:

Գամ գլուխս զիրկը զցեմ,  
Քնեմ քաղցը քո զրկին,  
Զարթնեմ զւարթ զովը զարկէ,  
Զովս ու զեփիւռ իմ սրտին:

Ծառ ու ծիրան, ծիտ ու ծաղիկ,  
Եար, քեզ երգեն եռանդով,  
Մենք էլ մենակ մարմանդ ման գանք,  
Ազատ անուշ անվրդով:

Հրաբուխներ, հրդեհ, հեղեղ,  
Քարեր քանդեն քայլայեն,  
Մէկ մարդ մեզի մօտիկ չգայ,  
Անկախ ապրենք աշխարհէն:



ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

—Մայրիկ ջան—մնաս բարով,  
Ես կերթամ սարով քարով,  
Վերադարձիս սպասէ,  
Բաժանվում եմ մէկ տարով:

Մայրիկ ջան, մայրիկ ջան,  
Բաժանվում եմ մէկ տարով:

—Բարով երթաս, որդեակս,  
Իմ փայլուն արուսեակս,  
Էլ անկողին չեմ մըսնի,  
Մինչև դառնաս, հոգեակս:

Իմ բալէս, իմ բալէս,  
Մինչև դառնաս, հոգեակս,

—Հեռու երկիր պիտ գնամ.  
Օրհնէ այնտեղ չը մնամ,  
Ճամբու պաշար պատրաստէ,  
Մի լար, անփորձ կը դառնամ:  
Մայրիկ ջան, մայրիկ ջան,  
Մի լար, անփորձ կը դառնամ:

— Նպատակէդ չը շեղուիս,  
Որ պիտանի մարդ լինիս,  
Ազօթքս անէծք կը դառնայ,  
Թէ որ չարին հետեիս:  
Իմ բալէս, իմ բալէս,  
Թէ որ չարին հետեիս:

— Աշխարհն իրար է անցել,  
Արիւնը ծով է դարձել,  
Հանգիստ քնել չեմ կարող,  
Սիրաս վէրքով է լցուել:  
Մայրիկ ջան, մայրիկ ջան,  
Սիրաս վէրքով է լցուել:

— Գնա հասիր օդնութեան,  
Եղիր հոգի փրկութեան,  
Ես կաղօթեմ անդադար,  
Տէրը լինի քեզ պաշտպան:  
Իմ բալէս, իմ բալէս,  
Տէրը լինի քեզ պաշտպան:

### ԳԱՂԱՓԱՐԻ ԹԱԿՈՒՀԻՆ

Հեռնւ, շատ հեռու լեռան ճակատին,  
Ոսկի է կապել արևի շողը,  
Նորանից վերև բարձր կատարին,  
Քաշել է կրծքին գոհարեայ քողը.  
Վեճ գաղափարի անմահ թագուհին,  
Դէպ աւերակաց հնչում է փողը,  
Կեանք է ներշնչում աւերակներին,  
Կրկին յարութիւն տալիս է երկրին:

Խոժոռ հայեացքով չորս կողմն է դիտում,  
Դէպ ատելութեան սերմերը ծլած,  
Զարագործներին անէծք է թափում,  
Երկնակամարը դէպ բազկատարած.  
Մերթինքն է ողբում, մերթ փողը հնչում,  
Կանգնել է յուզւած սաստիկ վրգովւած,  
Մերթ լի բարկութեամբ ուժգին որո-  
տում,  
Նոյն որոտումից աշխարհն է ցնցում:

Թէ չունիմ թւնիմ — ոլանամ — գնամ,  
Սէդ արծուի նման լայն — լայն թերով,

Օդը պատառեմ—այնտեղ մօտենամ,  
Մօտ աչքով գիտեմ անյագ համբուրով.  
Փաթաթուիմ կը ծքին, հոգով վերանամ,  
Վեհ ազատութեան անսահման սիրով,  
Եւ այնուհետև մի տերև դառնամ,  
Մեծ լեռան կը ծքին յաւերժ անթառամ:

Ժ Ա. Յ Ռ Ե Ր Ի Գ Է Մ

Մի մակոյկ եմ անտէր սկ ծովի ծոցում,  
Տատանւելով աղերսում եմ օդնութիւն,  
Ալիքները ժայռէ իժայռ են խփում,  
Զախջախում են հէզ գլուխս դեռ կապ-  
րեմ,  
Եւ անպայման նպատակիս կը հասնեմ:

Մի ելք չկայ ցամաք դուրս գամ՝ ա-  
զատւեմ,  
Թեր չունիմ թռնեմ սարի կատարին,  
Որքան գոռամ, որքան գոչեմ, չի լսվում,  
Թէկուզ խրուեմ ծովի անհուն խորքե-  
րում,  
Դուք միք կարծիր, որ պիտի կորչեմ  
իսպառ:

Ընկերներս հեռւից կանգնել կը գիտեն,  
Նոքա լողալ-թիավարել լաւ գիտեն,  
Բայց նախանձը չի թողնում որ ինձ  
մօտ գան,  
Զեն ցանկանում լինել պատճառ բարու-  
թեան,  
Որքան էլ որ ալիքները ինձ ջարդեն,  
Վեհ անունս ջնջւելու չէ աշխարհէն:

Մեծայոյս եմ որ գուրս կգամ ճանապարհ,  
Քանի ողջ եմ պիտի ջանամ անդադար,  
Թող հալածեն, թող միշտ տանջեն շա-  
րաչար,  
Դարձեալ կ'յաղթեմ դրօշակս կը պարզեմ,  
Եւ յաւիտեան անմահ անուն կը թողնեմ,



ՆՈՒԵՐ ԸՆԿԵՐԻՍ

Ի՞նչպէս երգեմ, անգին ընկեր,  
Թոյլ լարերով քնարիս:  
Ախ շատ խոր են սրախս վէրքեր,  
Ոհ, այրփում է խեղճ հոգիս:

Գերբնական մի անուշ հով,  
Զարկէր այրուած ճակատիս,  
Բաւ չէ արգեօք էդ քո սիրով—  
Այրւիմ-տանջլիմ սիրելիս:

Դալար ծաղկունք-յասմիկ շուշան,  
Կարօտ չեն սէր գըգուանքի,  
Միայն ես եմ ապրում, միայն,  
Անտէր, անյոյս-միշտ գերի:

Պայծառ լուսին փայլուն աստղեր,  
Լոյս շաղեցէք դժբաղդիս,  
Տուէք հոգի և նոր ուժեր,  
Հասնիմ ձեռ տամ ընկերիս:

Խ Ո Բ Վ Է Բ Ք Ե Բ Ծ

Պատուհանիս մօտ նստած միայնակ,  
Ցիշում եմ սիրուս անցեալը անյագ,  
Խոր-խոր վէրքեր կան սրտումս անյա-  
տակ...  
Եղիր թշուառիս դու միշտ կարեկից,

Անգին օրերըս թուան-չքացան,  
Ախ, վառ յոյսերս հեռու սլացան,  
Նախշուն ծաղկունքս վաղ թառամեցան..  
Եղիր թշուառիս դու միշտ կարեկից:

Ծովն ալեկոծուած, ուղեկից չունիմ,  
Նաւս է մոլորւած ղեկավար չունիմ,  
Կեանքսքայքայւեց՝ կարեկից չունիմ,  
Եղիր թշուառիս դու միշտ կարեկից:

Մենարանս ցուրտ, շուրջս ամայի,  
Թէ մէկն ինձ գթար՝ կեանքս կուտայի,  
Գէթ մի ժամանակ քեզ հետ ապրէի...  
Հասիր թշւառիս-եղիր կարեկից:

Ս Ե Ւ Ս Ա Ր Ե Ր

Ի՞նչ էք ծլել-ծաղկել սարեր դուք հակայ,  
Հպարտ-հպարտ չորս կողմ դիտում ան-  
գգայ  
Գլուխներդ մինչև երկինք է հասել,  
Կրծքերիդ տակ վիտում օձու կարիճներ,

Զեր ստուերից ոչ կը ծլինք-ոչ ծաղկինք:  
Դուք խլեցիք մեզնից արև, թէ երկինք,  
Մեզ չեն տեսնում երկինք, արև, ոչ  
լուսին,  
Մոայլ-մութ քող քաշեցիք մեր երեսին,

Կգայ մի օր-խիստ քարեր-ցուրտ ձմեռ,  
Սառուցներով շղթայելու ձեր լանջեր,  
Յայնժամ թօշնած ծաղիկներով-վարդե-  
րով:  
Դուք կը մեռնիք ամօթահար դու սրտով:

Իսկ մեզ կրկին կգայ անուշ նոր գարուն,  
Զով ու զեփիւո, ծիտ ու ծաղիկ—  
Տան մեզ համբոյր և ողջոյն:



Լ Ռ Ե Ե Ր Գ Դ

Բլլուլ, էլ ի՞նչ ես երգում,  
Ել վարդըդ վորչնել է,  
Ում ես գովում-գորովում,  
Սիրուն եարըդ թօշնել է...

Լաւ է երգդ, խորն է վերքդ,  
Աւան վարդըդ թօշնել է:\*)

Կանաչ գարունըդ գնաց,  
Սկաթե աշուն կուգայ,  
Վարդիդ ծառը կուչ եկած,  
Աւեր այգում կը սգայ...

Կըկուն ու բուն քեզ վերայ—  
Ծաղը ու ծանակ են անում,  
Իսկ քո սիրոը սէր կուլայ,  
Դեռ կարմիր վարդ ես փնտում...

Վարդըդ թօշնաւ-թառամաւ  
Ասա, էլ ում ես գովում,  
Նախշուն գարունըդ թուաւ,  
Սիրտ ունիս, սէր ես երգում...

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տաղերը:

### ԱՆՈՒԾ ՔՈՒՆ

Բաղլ մտայ ջոկեցի,  
 Կարմիր վարդը պոկեցի,  
 Ամպ, թէ աստւածկը սիրես,  
 Մէկ լուսնեակին դէմ կեցի...  
  
 Վայ լէ լէ, լէ լէ եարը,  
 Լէ լէ լէ ջանըմ-թէլլի խանըմ\*)

Տէյմօր հասնիմ եարիս տուն,  
 Հանւիմ-մտնիմ անուշ քուն,  
 Ելի յետ դարձի գնայ...  
 Նստի բարձր սարերսւն...

Թող քեզ էզնի էն սարեր,  
 Հետդ քաշէ տար չարեր.  
 Անձրև էրա փափկըցու,  
 Իմ ճամբիս վրի քարեր...

Ես կերթամ կէս գիշերին,  
 Էրնէկ քնած դըշերին,  
 Ոչ դարտ գիտեն, ոչ սաւտա  
 Զեն էլ դիպնի փըշերին...

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

### ՃԱՄԲԱԽ ԶԿԱՅ

Չունն էկեր է ձորեր լցեր,  
 Բօրան յէլեր դռներ գոցեր,  
 Ա՛խ, զիմ ճժեր մկա ին դօր,  
 Մկա իմալ կու մաղկըտին:

Սով-ցաւ էրկիր թալեց ուր թև,  
 Հըմլա թէ օրը դժոխք ու դե,  
 Ես խուրպաթն եմ, ճամբախ չկայ,  
 Մկա զիմ տուն արուն գիլայ:

Ճժեր քոռփա, տկլող, բոպիկ,  
 Զըմէն մախուլ ու խօրօտիկ,  
 Հոս մացեր են քափուրի խող,  
 Վէցը խացկեր, մէկ ծիծ ուտող:

Եօթն անւան տէր Սըր Կարապետ,  
 Զիմ ճըժերուն մը իշքա խէթ,  
 Քու յապովն իմ թորկած գացեր,  
 Մըր սուրփ վաթան, տուն ու ճըժեր:

Ա.Ն Թ Ե Ւ Ս Ա Վ Ե Ր

Արի արծիւ քո բարձունքէն,  
Իշխր գետին մօտեցիր,  
Հնկիր գետը մեզի նման,  
Փորիդ վերայ լողացիր:

Տեսնենք այնքան ոյժ կայ քո մէջ,  
Որ մեզի պէս համարձակ—  
Դիմադրես, խաղաս, լողաս,  
Գոռ հոսանքին հակառակ:

Առվորել ես ազատ օդում—  
Ղանատներդ բաց անել,  
Ինքնազլուխ ու միշտ ազատ,  
Հպարտ հեզնել, սաւառնել:

Դէն մի անգամ փորձէ-իջիր,  
Փրփրած գետի եզերքին,  
Այն ժամանակ լաւ կտեսնես,  
Թէ ինչ կդայ քո գլխին:

Այնունետես պիտի ջանաս,  
Աստղերի մէջ բոյն շինել,  
Քանի ողջ ես՝ չը յանդգնիս—  
Երկնից երկիր վայր իջնել:

ԿՈՒԼԱ ԵՐԿԻՆՔ

Ի՞նչ ես կնճռւել ինչու ես լալիս,  
Աչքէդ ծով արցունք ինչու է գալիս,  
Ում դագաղի մօտ, ում գլխի վերայ  
Միթէ քո սիրտն էլ վիշտ ու ցաւ կզգայ:

Ո՞հ, ես լալիս եմ սէրն ու բարութիւն,  
Որ մեռան կորան, թողին դառնութիւն,  
Ո՞հ, ես լալիս եմ այն թշուառներին,  
Որ միշտ ձգտում են իրանց շահերին:

Ես սէր ցանեցի՝ որոմներ ծլեց,  
Ողջ երկրագունդը դառնութեամբ լցեց,  
Ուժովն անուժին, տե՞ս կուլ է տալիս,  
Դեռ ինձ հարցնում ես, թէ ինչ ես լալիս:



**ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ**

Մըգա դու Մասիս, ողբա Արարատ,  
Դառն արտասուքդ խառնէ Արաքսին,  
Քո մուսաներից մէկն էլ հարազատ,  
Մահու ճիրաններ ծոցէդ խլեցին:

Մռայլ ամպերը փաթաթիր գլխիդ,  
Սպիտականեր գագաթդ ծածկէ,  
Ու կանաչազարդ վշահար կրծքիդ —  
Անհուն խորքերից սև բաղդդ երգէ:

Քո մատաղ կուսանք հագած սև շորեր,  
Սոխակներիդ հետ ներդաշնակ ձայնով,  
Հիւսեն անուշիկ-սրտառուչ երգեր,  
Ու մուսաղ հանգչի իւր անզարթ քնով:

**ՎԱՐԴ ՑԱՆԵՑԻ**

Մէկ սիրտ էրա, հէյ անջիկեար.  
Արի մեր տուն ներս մտի,

Ես հիւանդ եմ, եալ, քո դարտով,  
Էդ քու սիրով ճար գտի:

Աչքս մնաց, մի, քու ճամբէդ,  
Հէջ չէ, արի երազով,  
Մէկէլ տեսնիմ շըզւա բօյրդ,  
Զէղնի մեռնիմ մուրազով:

Թէ սարեր կան ճամբուդ վրայ,  
Թև առ թռի-անցկացի,  
Թէ չարեր կան սրտիդ վրայ,  
Դուս վոնտէ շուտ հասի:

Տարիներս գլոր-մլոր,  
Ա-խ, շուտ անցան գնացին,  
Իմ սաւտալու սրտիս բոլոր,  
Քու դարտերդ մնացին:

Վարդ ցանեցի,  
Դարդ քաղեցի,  
Եալ փնտռեցի,  
Եարա գտայ:

ԽՐԱՏ ՊԱՏԱՆԵԱՅ

Զգոյշ եղիր, սըտիդ գուռը գոց պահէ,  
Քեզ եմ ասում, անմեղ-անբիծ պատահի,  
Զը լինի թէ նեքսև ընկնի գող սէրը,  
Քանդէ-աւրէ, սիրտդ գողնա ու տանի:

Թէ որ տարաւ, էլ հանգիստ չես ունենայ,  
Քանի ողջ ես, տանջւելու ես չարաշար,  
Հալէ-մաշէ, թողնի ու պիտ հեռանայ,  
Բոլոր ջանքդ թերի թողած անկատար:

Ահա որդեակ, տալիս եմ քեզ այս խրատ,  
Դու անփորձ ես, որպէս դաշտի մի ծաղիկ,  
Թէ չը պահես՝ ցաւից չես մնար ազատ,  
Սիրոյ ձեռքից գլուխդ կզայ մեծ չարիք,

ԺԱՅՄԻԼ ԵՒ ԳԵԾԸ

Դու ինչպէս ես յանդկնում,  
Իմ փեշերիս մօտենում,

Համբոյբներով-լիզելով,  
Շտապում ես դէպի ծով:

— Աղաչում եմ, ով սէդ ժայռ,  
Մի փակիր իմ ճանապարհ,  
Մենք երկուքս էլ քոյրեր ենք,  
Ինչու դէմ-դէմ մաքառենք:

— Ի՞նչ ես խօսում, առ թշւառ,  
Դու ինչ քոյր ես ինձ համար,  
Դու որտեղ ես, ես որտեղ,  
Չես տեսնում կուրծքս ահեղ:

— Է՞ն, ինդրելով օգնեցի,  
Դեռ չես ճանաչել ինձի,  
Որ մի անդամ կատաղեմ,  
Քեզ հիմնատակ կը քանդեմ:

— Գիտես որքան կայծակներ,  
Գլխիս, կրծքիս են խփեր:

Բայց քայքայել չեն կարող,  
Միթէ կւնի ինձ յաղթող:

—Իմ կատաղի հեղեղներ,  
Դեռ կեանքիդ մէջ չես տեսեր,  
Որ մի անգամ բարձրացան,  
Քեզի կանեն ցիրուցան:

—Եյ, ինձ տես մէկ նրտեղ եմ,  
Աստղերի հետ կը խօսեմ,  
Դու ոտքերիս տակ ընկած,  
Կերթաս մոլոր շուարած:

—Թիք գլուխդ խոնարհէ,  
Դէպ յատակս լաւ նայէ,  
Կտեսնես քո բեկորներ,  
Որ իմ ծոցում են հանգչեր:

Վերջապէս մեր ժայռն ու գետ,  
Չեն հաշտրվում իրար հետ,  
Ընդհարվում են անդադար,  
Զկայ նոցա հաշտարար...  
Այս է գործքդ ոև աշխարհ:

Մէկ վեր ՆԱՅԷ

Սրախս խոլքէն խուլ հառաջներ,  
Կուզան կանցնին քու մօտէն,  
Դուման կապեն սարեր ձորեր,  
Էդ քու տուած ոև դարտէն:

Իմ կարօտն էլ թև է առել,  
Պարտում է քո գլխին:  
Մէկ վեր նայէ, թևն է փռել,  
Որ դինջ քնես, իմ փէրին:

Միտքս իջել ոտքերիս տակ,  
Զաղիկ ցինում քու ճամբին,  
Դու թոթոսս—անուշ թոշնակ,  
Գաս վեր իջնիս իմ կրծքին:



ԱԶԲ ՈՒ ՈՒՆՔ

Սիրտս խանձեցին, հոգիս այրեցին,  
Եդ քո հրացայտ զալում աչքերդ,  
Ջիկեարներիս մէջ խորունկ խրւեցին,  
Եխ սուր-սուր սլաք զուլում ունքերդ:

Ա-խ, ես մնացի թմրած—մոլորուած,  
Ինձ կաշկանդեցիր ոսկէ շղթայով,  
Ե-յ, թոչում էի թեերս փռած,  
Խիստ բարձր ու հեռու խոշոր յոյսերով:

Հոգիս հանեցիր, աշխոյժս մեռաւ,  
Եղայ մոռացուած մի անպէտ գիակ,  
Գլխիս հով անող արծիւս թռաւ,  
Ինձ ընկեր մնաց՝ թառս միայնակ:



Ի Մ Ե Ա Ռ Ը

Թառլան-թառլան իմ եարը,  
Դարտերիս գեղ ու ճարը  
Ծլած-ծաղկած հանդի մէջ,  
Քնած է իմ սարտարը...

Պալա եարիս հատը, ջանիս հատը,  
Զկայ-չկայ սաղ աշխարհի մէջ,  
Զկայ վառ պայծառ աստղերի մէջ—  
Եարիս հատը, ջանիս հատը...  
Դրախտի ծախիկ է իմ եարը.  
Իմ նազատարին ես մատաղ,  
Իմ դարսատարին ես մատաղ:<sup>\*)</sup>

Երթամ ձէն տամ վեր հանեմ,  
Վկոլ ընկնիմ տուն տանեմ,  
Փաթաթուիմ անդին կրծքին,  
Սրտիս սէրը բաց անեմ...

Էն իմ սրտի սիրածին  
Էն իմ աչքի ջոկածին,

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

Հալալ-զուլալ ես մատաղ,  
Աննման արարածին...

**ՊԻՏԻ ԼՈՂԱՄ**

Ծնուած օրէս անգութ մայրս  
Չեռ ու ոտս կաշկանդեց,  
Ազատ կեանքս որպէս մութ բանտ,  
Օրորօցում բանտարկեց:

Ես լալիս եմ, նա չէ լսում,  
Ինձ հարում է չարաշար,  
Ստրկութեան ահեղ ծովում,  
Ո՞հ, պիտ լողամ դարէդար:

Պիտի լողամ-պիտի դողամ,  
Մինչ յաւիտեան անարգւած,  
Որովհեաև գուլ զաւակ եմ,  
Անկիրթ-տգէտ ծնողաց:

Բայց ՞չ, արգէն վերածնուեց—  
Վեհ յոյսերս յաղթական,

Ազատութեան անշէջ լոյսը  
Համելու է փրկութեան:

**Ի Մ Թ Ա Ռ Ը**

Թող լաց լինիմ միշտ քո կրծքին,  
Որ քար սրտեր մեղմանան,  
Դէհ, ուժով զարկ իմ լարերին,  
Շանթ երգերս վեր սուրան:

Այս սոսկալի դառն կեանքում,  
Զարկ մըզկտամ խոր սրտէս,  
Ու աղերսեմ սէր, զթութիւն,  
Վանել զրկանքն աներես:

Իմ դողդոջուն հեզ լարերից,  
Թող զզածուի ողջ աշխարհ,  
Զարկ-զարկ, թնդան իմ հնչիւնից,  
Զնջուին չարիք բիւր-հազար:

Իսկ երբ լսեմ ազատութեան  
Հրապուրիչ մեղեղին,  
Ել մի՛ կրիբ կրծքիդ վըրան,  
Թող լուռ հանդչի իմ հոգին:

Ս Ե Ւ Կ Ա Ր Ի Ք

Այն ծիրանի հորիզոնը  
Այսօր պղտոր է, մութն է.  
Մոայլ մշուշ եթեր պատած,  
Խաւար է, սև է, մութն է:

Ո՞ւր չքացաւ պայծառ արփին,  
Այն կենսատու մեծ ողին.  
Ո՞ւր սլացաւ աստղիկ փայլուն,  
Կենաց նեկտար ամենքին:

Որը ցաւոտ, որը քաղցած,  
Խեղճ ամբոխն է բողոքում.  
Յուսակառը մերկ դիակներ  
Վերջին հողում թաքցնում:

Ես կուզէի լինել արփի,  
Կամ շողողուն վառ աստղիկ.  
Շաղ տայի լոյս ամենուրեք,  
Ուր զգում են սև կարիք:

ԱՆՓՈՐՉ ԿՈՅՍԻՆ

Մի պարտէզ ես ծաղկափթիթ,  
Զովատարած հովերով,  
Թոչնիկմ ունիս նստած գրկիդ,  
Մետաքսահիւս թեկրով:

Այն թոչնիկն է իսկ քո կենաց,  
Եւ գոյութեան աստղիկը,  
Այն թոչնիկն է միշտ քո փառաց,  
Երջանկութեան ծաղիկը:

Զգոյշ եղիր կը թոցընես,  
Լեր հեռատես, իմ հոգեակ,  
Թորցնելով պիտ կորցընես,  
Վեհ անթառամ լոյս պատկ:

Այսուհետև անուշ կեանքդ —  
Դառնութեան ծով կդառնայ,  
Ելի զուր է ձիրք ու ջանքդ,  
Ոչ ոք վերադ չի գթայ:

## ԶԵՐՄ ՀԱՄԲՈՅՐ

Համբուրեցի, շրթունքներս այրեցին  
Հրղեհարուխ հրապուրիչ աչերդ,  
Վեր սլացող դանատներս կոտրեցին,  
Քափուր վարդից գոյն ստացած այտերդ:

Զկնորսի պէս սիրոյդ ծոցը ման կուգամ,  
Գէթ մի կաթիլ բաժին հասուր, նազիկ  
եար,  
Սէրդդ ծով էցաւի ծով է, լող կուտամ,  
Եղիր դու կեանք, ինձ գոյութիւն դեղու  
ճար:

Քանի նայեմ լուսնի պայծառ երեսին,  
Միշտ նրա մէջ չքնաղ պատկերդ եմ  
տեսնում,

Քանի նայեմ բողբոջ նոճի ծառներին,  
Եդ քո ձկուն շըղուա բօյրդ եմ յիշում:

Ես քեզ այնպէս եմ սիրում,  
Այնպէս՝ ինչպէս ձուկը ծով,  
Թոյլ տուր իրվիմ քո ծոցում,  
Խաղամ սիրոյդ ալիքով:

## ԴԱԺԱՆ ԽԱՆԴ

Հնկիր արև քո բարձունքէն,  
Ճաճանչներդ խորտակուին,  
Շաղ տուր խաւար այս անօրէն —  
Տառապանաց աշխարհին:

Զգացմունքս որդեր ծնաւ,  
Ամբողջ սիրտս են կրծում,  
Նազիկ եարըս բաժան ընկաւ,  
Ել ինձ սիրել չեմ կարծում:

Խանդը խփեց սիրտս փշրեց.  
Ել իզուր եմ ես ապրում,

Երկնից գետին մէկ շփոտեց,  
Հանգիստ կլնիմ դապաղում:

Ընկիր արև քո բարձունքն,   
Ճաճանչներդ խորտակուին,  
Շաղ տուր խաւար այս անօրէն—  
Տառապանաց աշխարհին:

### ՄԱՅՐ ԵՐԿԻՐԸ

Թողէք ինձ թողէք, հանգիստ-անվրդով,  
Բաւ է խանգարէք դարաւոր քունս,  
Արդ կուզեմ նոնջել աներազ քնով.  
Հերիք է քանդէք իմ տուն ու բունըս:


Ո՞հ, դուք ուզեցիք ունքերս շինել,  
Ունք շինելու տեղ՝ աչքս փորեցիք,  
Իբր կամեցաք թև տալ վեր հանել  
Բայց դժբախտաբար՝ մէջքս կոտրեցիք:

Դառըն երկունքով հերոսներ ծնայ,  
Որ ինձ չթողնեն գերութեան ծոգում,

Իսկ դուք դարձել էք անարդ սրիկայ,  
Գլուխս էք կտրում, սիրոս խոցում:

Ո՞հ, դուք ապերախտ-անարժան որդիք,  
Ափսոս այն օդին, որ դուք չնչեցիք,  
Ու իմ անարատ-անբիծ անունը—  
Ոտնակոխ արիք, խայտառակեցիք:

Կորաւ ամեն բան, մեռնում եմ և ես,  
Սրտիս մէջ դիզւած խոշոր իղձերով,  
Իսկ դու չար ոգի, դաժան սկերես,  
Դէն ազատ շրջէ ծիծաղ երեսով:



ՈՍԿԵ ԹԱՍԼ

Հազար էրնէկ էն գիշերին,  
Թը ինձ բութա տուեցիր,  
Նախշուն թոչսիկ, իմ հէգ սրտին,  
Զեռքդ զարկիր-խլեցիր:

Ոսկէ թասը լիքը գինով—  
Անուշ գինով մուրազի,  
Կտաս նրան հազար դարդով,  
Ով որ քեզ կը երազի:

Ես խմեցի... էն օրուանէ,  
Դեռ հարբած եմ քո էշին,  
Թէ բութա էր... հապա ուր է,  
Զեմ հասնի իմ մուրազին:



Ի Մ Ս Է Ր Ը

Ո՞վ է տեսել նոճի ծառին նուռ բուսած,  
Տերևներում չքնաղլուսնիկ պատրուսած:

Ոչ մէկ պարտիզում դեռ չեմ տեսել,  
Ոչ էլ աշխարքում հատըն է ծնւել.  
Էն իմ տէրըն է, էն իմ սէրըն է,  
Էն իմ փէրին է: Դարդոտ եմ...  
Ա՛խ, սավտաքար եմ, անդեղ ու ճար  
եմ, անհոգատար եմ.  
Աստւած սիրողը, սիրոտ ունեցողը  
Թող չդիպնի.—Ես վշտահար եմ:\*)

Ո՞վ է տեսել աչքերի տեղ աստղիկներ,  
Ո՞վ է գծել՝ շրթունքի տեղ ծաղիկներ:  
Էն լուսնիկը սիրուն եարիս ճակատն է,  
Էն չինարին, իմ թառլանիս հասակն է...

Էն զոյգ նուռը կաթնաղբիւր են կենսա-  
կան,  
Վառ աստղիկներ լոյս են շողում  
հողեկան:

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

ԹՈՂԵՔ ԵՐԳԵՄ

Ինչ սրաի մէջ, որ դարդ չկայ  
Էն ինձ ընկեր չեմ ուզում,  
Ինչ բաղի մէջ, որ վարդ չկայ,  
Էնտեղ երգել չի սազում:

Հազարան գոյն ծաղկունք քնքոյշ,  
Թէ որ մէկտեղ պար բռնեն,  
Հազարան ձէն երգեն անուշ,  
Մազ չի պակսիլ իմ դարտէն:

Դարդոտն է իմ սերտ ընկերոս,  
Վարդոտ բաղը—երգիս վայր,  
Թառս է միակ կեանքս, սէրս,  
Թողէք երգեմ անդադար:



\* \*

Արևն էլաւ նազով կամաց,  
Գիշեր, փէշըդ քեզ քաշէ,  
Էն չար դուշը թուաւ գնաց,  
Արծիւ սարէն մեզ կաշէ:

Դալար ծաղկունք վեր շիտկեցին  
Թերթիկները անհամար,  
Հաւքեր անուշ գեղգեղեցին,  
Ճամբորդն ընկաւ ճանապարհ:

Դէ, ել քնէզ, մէկ դուրս արի,  
Իմ սևաշեայ գեղանազ,  
Հերիք շինես սիրուդ գերի,  
Թողած անտէր-բեմուրազ:



ՍԱԻՏԱՔԵԱՐ

Մալուլ-մալուլ շատ ման էկայ,  
Անձաղ սրտով եար գտայ,  
Սրտիս եարար, էն էլ հեռու,  
Զեն թողնի թէ մօտս գայ:

Վարդեր բացւած կը վառվոխն,  
Պեծեր կուտան իմ աչքին,  
Բաղի դուռը չի բաց անում,  
Ա՛խ, էղ քեափիր բազմանչին,

Մորմոքալէն նստեր կուլամ,  
Ա՛խ, էն վարդին ջան կուտամ,  
Ջանս մատաղ էղնի եարիս,  
Գլուխը դուրպան կուտամ:

Էս ազիզ ու անուշ օրեր,  
Մնացել եմ խեղճ անտէր,  
Առանց եարի, առանց ճարի,  
Սիրտս եարով է լցուեր:

Սավտաքեար եմ քանի տարով,  
Եարիս դարդով, մեծ դարդով,  
Սիրտս կուլա, արուն կուլա,  
Ազիզ ջանիս կարօտով:

Սաւտաքեարի սիրտըն է խոց,  
Հոգին հիւանդ, միտքը բոց,  
Չալըշ կուզայ, չարա չկայ,  
Էյ, երկինք, քո դուռն է զոց:

\* \* \*

Երկրպագում եմ քո վեհ պատկերին,  
Անսահման սիրով, սահմանադրութիւն,  
Երեսը շոյեմ քո սուրբ ոտքերին,  
Դու պարզեցիր մեզ նոր յարութիւն:

Եկար սրբելու արիւն արտասուք,  
Դարեսը ծանր լուծը խորտակել  
Չար ոգիներին գերի ու ստրուկ,  
Նորանց արժանի պատիժ հասցնել:

Հալածւածներին եղար ապաստան,  
Քո ծոցում նոքա տեղ գտան ազատ,  
Զանազան ազգեր կերպեն միաձայն,  
Նշան գոհութեան, պարզած դըրօշակ:

Մ Ե Ծ Դ Ա Բ Դ

Թէ որ չունիս դարդ ու բալա  
Սրի ջիւան եար սիրէ,  
Զիւան, թառան փունջ ալվալա,  
Կուզես՝ հոգիդ նուիրէ:

Էն քեզ համար անդեղ ու ճար,  
Մի մեծ դարտ է սարերով,  
Էլ բուժւելու չկայ հսար,  
Դու կը մեռնես էն դարտով:

Թէ միտք ունես եար դանելու,  
Փնտոէ գտի քեզ յարմար,  
Թէ ձգտում ես լաւ ապրելու,  
Եարդդ լինի հաւասար:

Ե Բ Գ Ի Զ

Հանձար, բնութիւն դու ստեղծեցիր,  
Ամենայն բարիք առատ ու անծիր,  
Լեռներ, բլուրներ ծառներ ու ծաղկունք,  
Ծով, գետ, գաշտ ու ձոր, գեղագոյն  
թռչունք:

Թնքուշ ու կոպիտ մարդիք բիւրաւոր,  
Իսկ անհաւասար տկարն ու հզօր,  
Որոնք տանջւում են բնութեան ծոցում,  
Որոնք էլ հրճւում վեհ փառաց զրկում:

Բուլբուլը ազատ իր վարդն է կովում,  
Սիրուն աղջիկը հզօրին զրկում,  
Մեղուն էլ նախշուն ծաղիկների մէջ,  
Հնատիրն է ջոկում, հիւթ ծըծում անվերջ:

Ամենքը ազատ իրաւունք ունին,  
Իրանց սիրածով թէ լան, թէ հրճուին,

Իսկ իսեղճ երգիչը ինքնազոհ սրտով,  
Պիտի սփոփուի մաղձոտ երգերով:

Քնարը ձեռքին երգէ-հառաշէ,  
Ու միշտ իր բաժան սիրուհին կանչէ,  
Արի ազիզ եար, արի սիրական,  
Ու մուրազող՝ լոէ յաւիտեան.

### ԱՆՑԵԱԼՄ

Կուսութիւնդ ինձ կուրացուց,  
Ես քեզանից զրկուեցի,  
Թողի կոկոն ազիզ վարդըդ,  
Թօշնածները փնջեցի:

Էն օրւանից բէխապար—  
Եղայ դատարկուն անձար,  
Ոչ մի անգամ մօտիկ կուզաս  
Ոչ էլ իսպառ կը հեռանաս:<sup>\*)</sup>

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տաղերը:

Ներիք հոգեակ-անուշ թռչնակ,  
Որ քեզ երկար տանջեցի,  
Իմ նախկին սէր-իմ հրեշտակ,  
Քեզ իմ ձեռքով թռուցի:

Բոպէներն անցան-թռան,  
Կազմելով օրն ու տարին,  
Անցան տարիք՝ կրկին տեսայ  
Քեզ, իմ սիրած լոյս փէրին:

Առաւոտեան ցօղը բացեց,  
Այն կոկոնըդ քաղցրաբոլը,  
Հիամթափուած նոր զգացի,  
Աշխ, կորուցի ես իզուր:

### Ն Ե Ր Կ Ա Ս

Ահա սիրտս, եթէ կուզես,  
Կրկին կտամ քեզ՝ տիրէ,  
Ու մազերդ շլթայ հիւսած,  
Զես հաւատում պինդ կապէ:

Տեսայ նորից բռնկեցիր,  
Նիրհած սէրս իմ նախկին,  
Սուր սլաքներ սրտիս դարկիր,  
Վրդովեցիր իմ հոգին:

Իխոր սրտէ ցանկամ զքեղ,  
Երջանկութիւն փառազարդ,  
Թող ծաղկալի դաշտեր լինին,  
Քո ճեմելիք միշտ ազատ:

Այն կենսատու համբոյրները,  
Դեռ կը խաղան շրթունքիս,  
Եւ անմոռաց միշտ դէպի քեղ  
Զգառում-թոշում է հոգիս:

### ԱՆԳՈՒԹ ՄԵՐ

Շատ սիրածս՝ սիրտս խլեց—  
Գցեց ոտքի տակ արորեց;  
Արիք կուրծքս բացէք տեսէք,  
Ես մեռնում եմ, մի ճար դաէք:

Հոգիառի պէս գլխիս կայնաւ,  
Հոգիս թողեց' սիրտս տարաւ,  
Ո՞վ է կարող անսիրտ ապրել...  
Կուրծքը դատարկ ու անսիրել:

Անգութ ձեռքով նետը քաշեց,  
Անխղճաբար կուրծքս խրեց,  
Դեռ ասում է—«սիրում եմ քեղ»...  
Ու մուրազն է սպասում մեզ»:

ԻՄ ԿԵԱՆՔԸ

Յերեկս պղաոր, գիշերս մոայլ,  
Լուսնեակս ազօտ, արկըս անփայլ  
Վշտեր բիւրաւոր՝ վիրաւոր սրտիս—  
Բոլորը բռնած, լացնում են հոգիս:

Տենչում եմ թևեր՝ թռնիմ-սլանամ.  
Դարգեր ու վշտեր թևերիս բառնամ,  
Ենեմ բռւն շինեմ ազատ լեռներին,  
Ճրւեմ ցաւերս՝ էն ու ամպերին:

Թող տանեն հեռու ցաւի աշխարհում,  
Ուր ազատ ու սէր, երբէք չեն տենչում,  
Իսկ ես այն բարձրից՝ ազատ վշտերէն,  
Վերջին երգս հնչեմ, իմ ազատ սրտէն:

### ԻՄ ՏԵՆՉԱՆՔԸ

Ա՛լս, երանի մի դեղձանիկ լինէի,  
Մինչ կեանքիս վերջ վանդակի մէջ մնայի  
Միայն թէ դու միշտ ինձ կուտ ու ջուր  
տայիլ,  
Եւ վանդակս նընջարանդ քաշ տայիր:

Իսկ ինձ համար ոչ քուն լինէր, ոչ դա-  
ղար,  
Աշուն, գալուն միշտ երգէի քեզ համար,  
Դու մանգայիր, ինձ նայէիր հըճուանքով,  
Գիշերն հանգիստ քուն մտնէիր իմ երգով:

Աչքերս բաց՝ քեզ տեսնէի ամեն ժամ,  
Անուշ քնքուշ իմ ազիզ վարդ աննման,

Մերկանայիր-երբ մտնէիր անկողին,  
Քնած ժամին վար իջնէի քո սրտին:

Թևիկներով լոյս երեսդ շոյէի,  
Սև աշերիդ անվերջ-անյագ դիտէի,  
Երբ զարթէիր, ինձ փակէիր վանդակում,  
Ել ոչ մի դարդ՝ չէր լինելու իմ սրտում:

### ԱՆԳՈՒԹ ՀԱՐԻԱԾ

Ո՞հ, ի՞նչ պինդ զարկիր սրտիս լարերին,  
Որ մղկտում են տարիներ տամնեակ,  
Իմ արմատացած մեծ-մեծ դարդերին,  
Դեղ ու ճար անող չկայ մի էակ:

Ո՞հ, ես չեմ կարող հաշտուել երբէք,  
Դաժան, անօրէն ճակատագրի հետ,  
Ընկած եմ անյոյս, մտքերըս բեկրեկ  
Կովում են անվերջ եարա սրտիս հետ:

Նայիր մէկ վերաս, տես ինչ օրի եմ,  
Գթառատ եղիր, իմ մուրազ, իմ տէր,

Հոգւով ու մարմնով քեզ միշտ գերի եմ,  
իմ թագ ու պանկյաւերժական սէր:

Գիշեր ու ցերեկ այսքան երգեցի, —  
Քո սիրոյ համար, քո սրտին յարմար,  
Արիւն արտասուր երգիս խառնեցի,  
Դարձեալ մնացի վիրաւոր, անձար:

Այժմ կայնել եմ գերեզմանիս մօտ,  
Թունաւոր կեանքս սև հողին յանձնել,  
Եկ հոգիսքեզ տամ, դու պահիր քեզ մօտ,  
Պահիր ծոցիդ մէջ՝ այն քեզ է վայել:

### ԻՆՉ ՀԱՄԱՐ ԼԻՆԵԻՐ

Երանի թէ ես լինէի սև հող,  
Ամառան շոգից, արեից այրւած,  
Իսկ դու լինէիր՝ անձրև, անուշ ցող,  
Վերէն շաղվէիր սրտիս պապակած:

Կամ թէ լինէի մի հսկայ կաղնի —  
Հաստաբուն, բարձր խիտ տերեներով,

Իսկ դու լինէիր զովաշունչ քամի,  
Ու միշտ հով տալով անցնէիր գլխով:

Կամ թող լինէի գիշեր մութ-մըթին,  
իմ սև թեերով աշխարհի վերայ,  
Իսկ դու լինէիր մի պայծառ լուսին,  
Քո լոյս թեերդ փռած ինձ վերայ:

### ԻՆՉ ԿՈՒԶԵ ՍՍԵՆ

Թող վերմակս կեղտոտ լինի,  
Ու վերարկուս ցեխ ու մուր,  
Թող ոտներս բորիկ լինի,  
Բայց սիրտս լինի մաքուր:

Ինչ որ կուզեն՝ թող ինձ ասեն —  
Մարդիկ — իրանց կարծիքով,  
Ու անդադար-միշտ հալածեն,  
Դեռ կապրիմ հանգիստ սրտով:

Իսկ երբ սիրտս կեղտոտ լինի,  
Երբ որ խղճի խայթ ըզգամ,

Մաքուր հազուստն ինձ չի օդնի,  
Կեանքիս մէջ ոչ մի անգամ:

### ՆԱԶ ԱՂՋԻԿ

Հալւեց սարերի ձունը,  
Խալերիդ դուրբան նազ աղջիկ,  
Բնէն թռաւ թռչունը,  
Քայլերիդ դուրպան ջան աղջիկ.  
Աչքէս խլեցիր քունը,  
Խալերիդ դուրպան նազ աղջիկ:

Եղնիկի նման ման գալդ,  
Կաքաւի նման պար գալդ,  
Շրթունքդ-լալ ու մարջան է,  
Նայուածքդ հոգի կը հանէ:\*)

Մեր ձորի ջուրն անուշ է.  
Խաս վարդի փուշը նուշ է.  
Կուրծքդ նուրբ է-քնքուշ է...

\*(Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

Կանաչ գարունն է եկել  
Բաղ ու բաղչայ է ծաղկել.  
Նախշուն փնջիկ ես դառել...

Մի վերի ես ծովային.  
Անխուն ծաղիկ ձորային,  
Թեթև թռչնակ հովային ..

### ԽԱՊԱՐ ՉՈՒՆԻՍ

Սիրում եմ քեզ՝ խապար չունիս,  
Խորովել ես ջիկեարըս,  
Դու հէչ սիրտ ու ջիկեար չունիս,  
Փունջ-փունջ ծաղկած չինարըս:

Կուժը ուսիդ աղբուր կերթաս,  
Ծաղկոտ դաշտի վրայով,  
Առ քեզ հետ տար իմ ոսկեթաս,  
Զուրմ էլ ինձ բեր քո ձեռքով:

Կամ թէ մէկ ետ գարձի տեսնիմ,  
Արծուի եանդուն աչերըդ,  
Մուրազիս էլ որ չը համնիմ,  
Հեռուից խլեմ պաշերըդ:

Ամեն գիշեր ուխտ եմ գնում,  
Էն պարզ անուշ աղբըրին,  
Որտեղից միշտ ջուր ես խմում,  
Մէրս խառնեմ էն ջրին:

### ՍՐՏԱՆՑ ԿՈՒԶԵՄ

Մի փայլուն աստղ ես բիւր շողերով,  
Երկնքից խոռված,  
Զարդ ու զիննաթով—լոյս երեսով,  
Դեռ աշխարհ չէ ծնուած:

Սրտանց կուզեմ մի համբոյր,  
Մառմառ գօշէդ, լոյս գօշէդ,  
Հիւրի ես, փէրի ես,  
Սիրուն ես-սիրուն ես, լա-լա-լա,  
Շունջդ կենաց զեփիւռ է,  
Մարդկանց աշխոյժ կը բերէ:\*)

\*) Ամեն տան վերջը կրկնել այս տողերը:

Եղ թեթև քնքուշ շարժումներդ,  
Մարդու չեն նմանում,  
Քեզ պէս հողածին չէ տեսնուած  
Հէյ, ում եռ պատկանում...

Նա բախտաւոր է, ով կարենայ—  
Մի անգամ համբուրել,  
Եղ հրեշտակիդ-անմանիդ—  
Սիրել ու գրաւել...

### ՆՈՒԷՐ ԻՄ ԸՆԿԵՐ ԱՐԱՅԻՆ

Սիրուս բնակարանը—  
Հիմքից քարու-քանդ եղաւ,  
Սրտիս սիրած թառամնը,  
Ինձ մոռացաւ ու թռաւ:

Ես մնացի աւարա,  
Անտէր չոլ ու քոլ ընկած,  
Առանց եարի բէչարա,  
Ինձ բաժին փուշ, վուշ մնաց:

Ել ի՞նչ երգեմ, երդ չկայ,  
Անցաւ կեանքիս գարունը,  
Սիրտս սիրոյ վէրք չկայ,  
Մոռացուեց իմ անունը:

\* \* \*

Ծաղկունք ձեր ծոցում անուշ քնով—  
Իմ եարն է քնած,  
Սրտիս բլբուլը էշխից ընկաւ,  
Լոռւեց ու մնաց:

Հէյ ձէն եմ տալիս ֆիտան եարիս,  
Ձէնս չի համնում,  
Երազների մէջ գիշերները,  
Նա ինձ է տեսնում:

Լոյսը բացուել է, հերիք քնիս,  
Ծաղկանց տէր արքայ,  
Քո խեղճ բլբուլդ երգը մոռացաւ,  
Նստել կը սըդայ:

### ԵԱՐՈ-ԵԱՐՈ

Լուսնեակը յէլաւ երկինքն ամպոտէ,  
Էս մայրում սիրտս եարի կարօտ է:

Եար-եար-եար-ախս եարօ-եարօ,  
Զանս քեզ զուրպան,  
Ես քեզի առնեմ ուր էրթամ,  
Մի ճար չկայ հանգստանամ:\*)

Հէյ, ծով եմ շինել շահան աչքերս,  
Մարդ չի հասկանում իմ սար դարդերս...

Նախշուն հաւքերը թռան էն սարէն,  
Չը տուին խապար իմ ջան-ջիկերէն...

Թռան հեռացան, թողին շուարած,  
Լուսնեակս խաւար, աստղս մոլորած...

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

### ԽԼԵՑԻՆ ՏԱՐԱՆ

Անտառի մօտ խոր ձորերում,  
Վտակն է հոսում,  
Վտակի մօտ խաս բաղերում,  
Սոխակն է խօսում:

Լուսնեակի տակ հանդերի մէջ,  
Զէյրանն է քնած,  
Հովերի հետ, վարդերի մէջ,  
Անուշ քրալնած:

Ծաղկունանց անուշ բուրմունքէն,  
Հարբել է կարծես,  
Դարդերի մէջ թողել մէկին,  
Խապար չէ սրտէս:

Զէյրանը իմ գլխիս տէրն է,  
Սիրել եմ նորան,  
Սիրեցի և սրտիս տէրն է,  
Խլեցին տարան:

### ՀԱԼԱԼ ԷՐԱ

Ճամբորդ եմ ջանիդ դուրպան,  
Կաց բարով ջան սիրական,  
Սիրաս քեզ մօտ կը թողնիմ,  
Չեղնի մնաս անդիւման:

Շամամ լանջէդ, շաւաղ լանջէդ,  
Մէկ-մէկ համբուր հալալ էրա,  
Հալալ էրա-հալալ էրա:\*)

Աղբուր բխաց ժեռ քարէն,  
Մարան իջաւ սէդ սարէն,  
Ուրիշէն ումուտ չունիմ,  
Մենակ դու ես իմ չարէն:

Շատացան դուշմաններս,  
Իրար մի՛ տայ դարտերս,  
Աստուած վրէդ բարկանայ,  
Թէ՛ որ ուրիշ եար ճարես:

\*) Ամեն տան վերջ կրկնել այս առղերը:

Լուսաստղը ելաւ արդէն,  
Կերպէ բլբուլն իր վարդէն,  
Քեարվանն եկաւ անցկացաւ,  
Խապար չունիս իմ դարտէն:

ՆԱԽՇՈՒՆ ԱԶԵՐ

Նախշուն աչեր, նախշուն աչեր,  
Սըտիս զարկիր, նախշուն աչեր,  
Ինձ գերեցիր·գրաւեցիր,  
Հէյ անման նախշուն աչեր:

Դու Աստղիկն ես, կամ Անահիտ,  
Ի՞նչ անուանեմ անմանիդ,  
Ե'կ մի անգամ սիրահարիդ,  
Սըտանց նայէ՛, նախշուն աչեր:

Ճերմակ մարմնիդ ալ ես առել,  
Թուխ մազերդ լանջիդ փռել,  
Անման դիցուհի ես դառել,  
Գոհարաշող նախշուն աչեր:

Երբոր տեսնիս ինձ երազով,  
Քեզ հետ նստած երգով սազով,  
Գէթ մի անգամ հազար նազով,  
Ինձ մի համբոյր, նախշուն աչեր:

Իմ կարծիքով չի կարելի  
Ոչ մի աշխարհ հատդ լինի,  
Առիւծն անգամ գոռ ահոելի,  
Մեղմանայ քեզ, նախշուն աչեր:

ԽԵՂՃ ՀՈՎԻԻ ԵՄ

Խեղճ հովիւ եմ սարի գլխին,  
Անտէրմենակ դարի գլխին,  
Ես մատաղ իմ եարի գլխին...

Խլեցին տարան եարըն,  
Տարան ֆիտան չինարըն,  
Խորովեցին ջիկեարըն,  
Սիրուն սարեր արև արէք,  
Անուշ հովեր բարե տարէք:\*)

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

Անձրկի տակ քամու բերան,  
Էկան մէկուճարս տարան,  
Աշխարս էղաւ սև ու վերան...

Էս սարերուն զօր ու գիշեր,  
Կերպեն անուշ հաւքեր դշեր,  
Ամեն էս վախտ ճամբէս կաշէր...

Էն մի տստղ էր, թռաւ գնաց,  
Սիրտս հետը տարաւ գնաց,  
Ալ վարդս մուր թօշնաւ մնաց...

### ՄԱՆԿՈՒԹԻՒՆԻՑ

Մանկութիւնից մինչև այսօր,  
Այս կատաղի ծովն ընկած,  
Ալիքներին զոռ ու հզօր—  
Զոհ եմ զնում կուչ եկած:

Շփոտում են ափանց ժայռոտ,  
Ուկորներս փշրտում,

Լոյս աշխարհի եղած կարօտ,  
Լաց լինելու չեն թողնում:

Թևեր չունիմ թռչուն դասնամ,  
Լեզուս լուռեց որ խօսեմ,  
Արդեօք ինչպէս գանգատ գնամ,  
Եւ ում ձեռքով աղատուեմ:

Անխիղճ մարդիք, անգութ աշխարհ,  
Լոյս արեն էք հալածում,  
Չեզ մօտ մէկ է լոյսն ու խաւար,  
Այ թէ ինչեր էք գործում.

### ՇՈՐՈՐԱ ԹԱՐԼԱՆ

Բաղէն թռած բլբուլ եմ,  
Պարտէգէն պոկած սնպուլ եմ,  
Ով որ սիրտս հասկանայ,  
Ես նորան զուրպան ու զուլ եմ:

Շորորա-շորորա թառլան շորորա,  
 Շահմար հիւսդ էրերա,  
 Շորորա ջէյրան շորորա,  
 Էրուած սրտիս հով էրա...  
 Գիշերն անցաւ՝ տուն չունիմ,  
 Շորորա թառլան շորորա,  
 Սավաքեար եմ քուն չունիմ,  
 Ղանատներդ բաց հով էրա:\*)

Աղբուր եմ սարի սրտին,  
 Չորա չկայ սրտիս դարդին,  
 Ամեն անցորդ կը խմէ,  
 Բլբուրն է ծարաւ ալ վարդին:

Զեփիւռ եմ չօլէն կուգամ,  
 Էրուած սրտերին հով կուտամ,  
 Ալ վարդին-ալվան վարդին,  
 Իմ շաղերս սիրով կուտամ:

\*) Ամեն տան գերջ կրկնել այս տողերը:



ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱԽԱՏԱՐՄԱՏԱՐ ՎԱՂԱ-  
 ԹԱՌԱՄ ՅՈՎՃԱՆՆԵԿՍ ՏԵՐ-ՄԱՐ-  
 ՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Բլբուր էիր սի աննման,  
 Քո մելանուշ երգերով,  
 Թուար հեռու և անսահման,  
 Սիրտդ հազար վէրգերով:

Այգեպանդ նստել կուլայ,  
 Վարդըդ թողիր թառամած,  
 Ֆիտան ծառդ լուռ կը սպայ,  
 Ծաղիկներըդ թոռոմած:

Խաս բլբուրներ թէն շատ կան,  
 Այս մեր անջուր պարտէզում,  
 Բայց ոչ մէկն էլ քեզի նման,  
 Անուշ-թովիշ չեն երգում:



### ՍԵՒ ԱԶԵՐԻ ՀԵՏ

Ամպը որոտաց, երկինքը փակուեց,  
Անձրեն է խօսում ծաղիկների հետ,  
Լուց բլբուլը վարդին փաթաթուեց,  
Ընդհարուեց սիրտս սև աչերի հետ:

Էն զօրեղ զարկէն կուրծքս պատառուեց,  
Կայծակի նման շանթեց ներս ընկաւ,  
Հպարտ գլուխս ստրուկ դարձրեց,  
Ու թռաւ գնաց, գնաց հեռացաւ:

### ԹՈՒՆԱՀՈՐ ԳԻՆԻ

Երանի թէ սարի գլխին ծնուէի,  
Չտեսնէի այս աշխարհը փառասէր,  
Մաքուր օդում անուշ ջրով մնուէի,  
Թող ապրէի միայնակ մերկ ու անտէր:

Ես խմեցի թունոտ գինին-հարբեցի,  
Քնա քաղցր ծաղկոտ ծառի հովի տակ,

Երազիս մէջ չքնաղ կուսին հպեցի,  
Երբ արթնացայ սրտիս զարկեց մի  
կայծակ:

Այն օրուանից ցաւի ծովում լող կուտամ  
Մի օր հանգիստ չունիմ այս շէն աշ-  
խարհում,  
Իգէալիցս հեռու-բաժան ման կուգամ,  
Առք ու փառքէն տուանց բաժին աշ-  
խարհում

### ՈՍԿԻ ԽՐԱՏ

Քանի որ շատ շտապիս —  
Այնքան պիտի ուշ համիս,  
Պէտքէ հանգիստ համբերես,  
Մինչև որ գայ հերթը քեզ:

Թշնամոցդ միշտ ներէ,  
Դա քեզ բարիք կը բերէ,

Գոռող անգութ չը լինիս,  
Որ վաղաժամ թառամիս:

Եղիր բարի-ջանասէր,  
Թշուառներին սէր և տէր,  
Միայն դիրքդ լաւ պահէ,  
Այդ քեզ համար մեծ շահ է:

### ԵԿ ԽՈՆՍՐՀՅՈՒԻՐ

Թէ որ անցնին պայծառ օրեր,  
Մթնէ ու գիշեր դառնայ,  
Մի վախենար անգին ընկեր,  
Լոյսը մեզ չի մոռանայ:

Կրկին մեզ նոր լոյս կը բացուի:  
Կարմիր արև կը ծագէ,  
Կրկին մեզ նոր յոյս կը բացուի,  
Ցաւի դռներ կը փակէ:

Եղիր տոկուն ու միշտ կոռուղ,  
Որպէս անյաղթ քաջ զինուոր,  
Դու այդպիսով կնիս յաղթող,  
Կառնիս հանգիստ գիշեր զօր:

Բայց վիճակէդ միշտ գոհ եղիր,  
Կուզես լինել երջանիկ,  
Ճակատագրիդ եկ խոնարհուիր,  
Ել չես զգայ սև կարիք:

Իսկ երբ ընկնիս մտքի ծովում,  
Ինչպէս վախկոտ նուավար,  
Գիտցիր անշուշտ ծովի ծոցում,  
Կորելու ես դու իսպառ:



Ն Ա Զ Լ Ի

Հոյսը բացուաւ, ջիւան կոյս,  
Հոյս լանջդ բաց-արի դուս...

Նազի-նազի, լէյլի-լէյլի,  
Սիրուն աղջիկ էշխիդ հաւասը,  
Խնձի մաջլուն է անելու\*)

Արշալոյսին բարև տուր,  
Էրուած սրտիս էլ մի չուր...

Մեղմիկ հովեր սարերուն,  
Զարթան ծաղկունք ձորերուն...

Հերիք քնիս մարալ եար,  
Եարա սրտիս դեղ ու ճար...

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:



ԿՐԾՔԻՍ ԹԵՔՈՒԻԻ

Մառալի պէս ման ես գալիս,  
Որսորդէն պրծած նմանիս,  
Քեզ տեսնողին համ ես տալիս,  
Անտառէն խլած նմանիս:

Արի-արի ինձ մօտեցի,  
Կրծքիս թեքուի հանգստացի,  
Ազիզ-աղիզ քեզ կը պահեմ,  
Աննման աղաւնեակ,  
Անուշախօս սոխակ,  
Երկնածին արուսեակ:\*)

Ասա տեսնիմ ում ես փնտռում,  
Աչքերդ կանթեղ ես արել  
Ով է տէրդ, ում ես սիրում,  
Դրախտի խնձոր ես դառել:

Գոյնդ առել ես վարդերէն,  
Տիրոջդ հազար երանի,

\*) Ամեն տան վերջ կրկնել այս տողերը:

Բօյ ես քաշել նոճիներէն,  
Նայում եմ սիրտս կը տանի:

\* \* \*

Տօնածառը կանաչ է,  
Բլբուն անուշ կը կանչէ  
Ես մեռնիմ էն աչքերին,  
Որ եարիս կը ճանաչէ:

Ուռի ծառը բար չունի,  
Թառս վրէն լար չունի,  
Ա՛խ, սիրտըս կը մղկըտայ,  
Չինար եարս ճար չունի:

Լամպը տակը լուս չխտայ,  
Եարս դռնէն դուս չի գայ,  
Բաղ եմ շինել շուարել,  
Անձրե կուգայ բուս չի տայ:

Մատնուս ակը խալիս է,  
Էսօր ինձ աչքալիս է,  
Ծաղիկ քաղեմ դէմ երթան  
Ֆիտան եարս գալիս է:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Սլով	Ուղիղ.
37	Լաւ է երգդ	Լու երգդ
38	Եարը	Եարըմ
39	Չունն	Չուն
—	Ին դօր	դօր ին
—	թէ օրը	օր թէ,
—	լսուրպաթն եմ լսուրպաթն իմ	
—	Հոս մացեր են Հոս մացեր ին	
47	ոտքերիս	ոտքերիդ
—	Չաղիկ	Ծաղիկ
48	էխ	Ա՛խ,



7/11 1922

Ա. ԱՆՁՆ ԴՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՆՁՆ ԴՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

வினாக்கள்

பொது	பாடம்	31
பாடம்	பாடம்	32
பாடம்	பாடம்	33
பாடம்	பாடம்	34
பாடம்	பாடம்	35

பாடம் பாடம்  
பாடம் பாடம்

ՀՀ Ազգային գրադարան



NL0350992

44548